

ՓՐՈՖ. ՅԱԿՈԲ ԱԳԻՍՏԱԼԻ ՊԱՏՈՒԻ Կ'ԱՐԺԱՆԱՆՅ
ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ
(Armenian American Medical Society of California)

Գալիֆորնիայի Ամերիկահայ Բժշկական Ընկերութիւնը իր 23^{րդ} Տարեկան Ճաշկերոյթի ընթացքին, որ տեղի ունեցաւ Կիրակի երեկոյեան, Մայիս 3ին, 2009 Պեվըրլի Պանդոկին մէջ, Պեվըրլի Հիլս, Գալիֆորնիա, մասնաւոր պատուի արժանացուց Փրոֆ. Յակոբ Ագիստալը՝ իր բժշկական մարպէն ներս արձանագրած նորանոր յաջողութիւններուն համար:

Ճաշկերոյթին հասոյթը պիտի յարկացուի Արցախի մէջ շարժական բժշկական դարմանումի համար (Mobile Diagnostic And Therapeutic Unit For Artsakh):

Ռամելա Մարգարեան՝ Նախագահը Գալիֆորնիայի Ամերիկահայ Բժշկական Ընկերութեան Տիկնանց Օժանդակ Մարմնի, բարի գալուստ մաղթեց բոլորին: Օրուան Հանդիսավարն էր Ֆրէնք Ծերունեան: Տոքթ. Վարուժ Ալավերտեան, Նախագահը FACOG իր սրտի խօսքը ուղղեց:

Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Առաջնորդարանիստ Մայր Տաճարի Կառուցման Աշխատանքներու Վերահսկիչ եւ Թեմակալ Առաջնորդ Սրբապան Հօր Ներկայացուցիչը՝ Հոգշ. Տ. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեան: Բժշկական Ընկերութեան գործունէութիւններու մասին տեսերիպի ցուցադրութիւն տեղի ունեցաւ: Յաջորդաբար խօսք առին Բժիշկներ Վարուժ Ալավերտեան եւ Յարութիւն Արմէնեան: Պատուոյ հիւրը ներկայացուց Բժիշկ Պողոս Երեւանեան: Իր երախտագիտական խօսքը յայտնեց Տոքթ. Յակոբ Ագիստալ, իսկ փակման խօսքը կատարեց հանդիսավար՝ Ֆրէնք Ծերունեան:

Հոգշ. Տ. Պարեպ Ծ. Վրդ. կարդաց Առաջնորդ Սրբապան Հօր պատգամը, որուն մէջ կ'ըսուէր. «Մեծապէս գնահատելի է, որ Փրոֆ. Ագիստալ երկար ժամանակ տրամադրած է եւ աստուածատուր իր կարողութիւնները գործածելով բժշկական կեանքէն ներս նոր յաջողութիւններ արձանագրելով չափապանց օգտակար կը հանդիսանայ եւ յոյս կը ներշնչէ ճնշուած եւ անորոշ վիճակի մատնուած միլիոնաւոր մարդոց: Փրոֆ. Ագիստալ հեղինակած է աւելի քան 500 գիտական յօդուածներ եւ յարգուած ու ճանչցուած է որպէս 10 լաւագոյն հետազոտութիւններ կատարող անձերէն մին: Շատերուն ծանօթ է, որ Հայաստանի 1988 թուի երկրաշարժէն ետք Փրոֆ. Ագիստալ մեծապէս օգտակար հանդիսացաւ մեր հայրենակիցներուն, որուն համար եւս կ'արժանանայ յարուկ պատուի»:

Հայր Սուրբի փակման օրհնութեան աղօթքէն ետք տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր: